

» 1891 «

**ԲԱԶՄԱՎԵՊ****ՀԱՆԴԻՍԱՌԱՆ**

ՀԱՏՈՐ ԽԹ

ՕԳՈՒՏՈՒ

**ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՔ****ՓԱՐԻԶՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ**

(Տես յ'էջ 109)

**ԱԲԴԻՍԱՐԻՍ**

ԱՏՄԱԳՐԱՅ քով անծանօթ այս թագաւոր, ծանօթացած է մեղիր անունը կրող դրամներով։ Իր արքունի կիսապատկերը՝ Քսերքսեայ գեմքը կրող դրամոց վրայ եղածներուն շատ նմանութիւն ունի, որով կրնանք հետեցընել թէ Արդիսարիս ալ նոյն երկրին վրայ թագաւորած է, այսինքն Արշամուշատի։ և հաւանականաբար Քսերքսեայ հայրն եղած է քան որդին, ինչպէս քիչ ետքը պիտի տեսնենք։ Քսերքսէս թագաւորեց յամի 170 յառաջ քան զհասարակաց թուականութիւն։ Արդիսարիսի թագաւորութեան միջոցն ալ կրնայ սահմանուիլ 200 տարի յառաջ քան զբրիստոս։ որով ժամանակագրաբար այս իշխանը չի կրնար Քսերքսեայ որդին ըլլալ և հիմնարկող Արշամուշատ քաղաքի։

Արդիսարիսի դրամոց վրայի արծիւը կ'երենայ ի շարս Սելեւկեանց՝ Արէոսի թագաւորութեան ժամանակէն ի վեր, յամի 98 (214 յառաջ քան զբր.)։ Նկատմամբ ձիազլուխ դրոշմին՝ մէջ բերենք Ստրաբոնի հատուած մը<sup>1</sup>, յորում կը պատմէ թէ նախարարք Հայոց իրուտարեկան հարկ կու տային թագաւորին Պարսից քսան հազար քու-

1. Ստրաբոն, 454. ըստ տպ. Տիտոյի։

ռակի Քիչ ետքը պիտի տեսնենք թէ Անտիոքոս Դի հետ դրուած գաշ-  
նադրութեամբ մը , Քսերքսէս արքայ Արշամուշատի՝ ընծայեց թագա-  
ւորին Ասորւոց հազարական երիվար և ջորի<sup>1</sup> : Արշակունի դը-  
րամոց վրայի ձիազլուխ դրոշմը կը գտնուի մեծին Միհրդատայ թա-  
գաւորութեան ժամանակէն (174 ց 146 նախ քան դիբ .):

ՔՍԵՐՔՍԻՍ , (յամի 154 Սելեւկ . 170 նախ քան դիբ .)

Քսերքսէս անունով Հայոց թագաւոր մը յիշատակուած կը գըտ-  
նենք Պողիրիոս պատմազրի հետեւեալ հատուածին մէջ . «Երբ Անտիո-  
քոս կը պատրաստուէր պաշարել զԱրշամուշատ , որ Եփրատայ ու Տի-  
գրիսի մէջ կառուցած քաղաք մ'է ի Գեղահովիտ կոչեցեալ վայրի , հոն  
իշխող թագաւորն Քսերքսէս՝ մէկէն փախաւ . բայց յետոյ մտածելով որ  
եթէ մայրաքաղաքն թշնամոյն ձեռքն իյնայ , դիւրաւ պիտի յաջողի  
նաև բովանդակ երկրին տիրապետել որոշեց պատգամաւոր զրկել առ  
թագաւորն Ասորւոց , ու հետը տեսակցութիւն մը առաջարկել : Ան-  
տիոքոսի կուսակիցք խորհուրդ տուին իրեն Քսերքսեսի անձին վրայ  
ապահով ըլլալ՝ և իր գերգաստանին մէջ մոցընել Արշամուշատի իշ-  
խանութիւնը , տալով զայն Միհրդատայ՝ իր քրոջը անհարազատ որ-  
դւոյն : Անտիոքոս մտիկ չընելով այս խորհրդին , լաւագոյն սեպեց խա-  
ղաղութեան դաշն դնել ընդ Քսերքսեայ . իր ներկայութեան բերել  
տուաւ զինքը , յանձնեց զմեծ մասն այն հարկաց զոր երիտասարդ  
իշխանին հայրը չէր ուզած հատուցանել , ու վրան տուրք դնելով ի-  
րեք հարիւր տաղանդաց , հազարական երիվարաց և ջորեաց իրենց  
կազմուածքով , Անտիոքիդիս քոյրն ալ տուաւ կնութեան՝ թագաւորա-  
կան գործերը կարգի դնելէն ետքը : Այս դէպքին մէջ Անտիոքոսի  
ցոյց տուած մեծանձնութիւնը ու առատամուռթիւն՝ իրեն ձգեցին  
այն կողմերու ժողովրդոց վստահութիւնն ու սէրը<sup>2</sup>»:

Պողիրիոսի այս պատմութենէն յայտնի կ'ըլլայ որ Քսերքսէս թա-  
գաւոր էր Ծոփաց այն մասին որոյ զիսաւոր քաղաքն էր Արշամու-  
շատ . Արդիսարիս՝ որոյ անուամբ գտնուած վերտառութիւնք՝ իր հայ-  
րը կամ որդին նկատել կու տան մեզ , հաւանականաբար հայրն էր .  
և անշուշտ ինքն՝ որ չէր ուզած վճարել այն հարկն , և ապա երիտա-  
սարդ թագաւորն՝ որդին և յաջորդ , բռնադատեցաւ հատուցանել : Եւ  
յիրաւի , Քսերքսէս յանձնուեցաւ բոլորովին ի մեծանձնութիւն Ա-  
սորւոց թագաւորին , որ թէպէտ ծանր տուրք մը դրաւ վրան ,  
բայց միանգամայն զքոյր իւր զԱնտիոքիդիս տուաւ նմա կնութեան ,  
որ արդէն մայր էր Միհրդատ անունով զաւկի մը :

1. Պողիրիոս Համառօտորիւնք , լ . 25 .

2. Պողիրիոս , անդ . լ . 25 : - Յովհաննէս Անտիոքայ , 53 , Պլատ . ի Zeit-  
scherift für Numismatik . Հատ . է . 33 .

Բայց յորմւմ ժամանակի կը կատարէին այս ամենայն դէպք, և զո՞ր Անտիոքոս Ասորւոց կ'ուզեն ակնարկել բանք պատմութեան Պողիրիոսի: Մ'եծ կարեորութիւն ունեցող պատմական խնդիր մ'է այս, ի զասակարգութիւն Հայաստանի և կոմագենաց զրամոց, և զոր հարկ է լուծել յառաջ քան զամենայն: Ոմանք կը համարին զԱնտիոքոս Գ զՄեծն, և այս կարծեաց ի հաստատութիւն՝ Ոթթոյ Պլաու Հանճարիմաստ գրութիւններ ալ հրատարակած է<sup>1</sup>: Խսկ այլք՝ կ'ենթադրեն թէ Անտիոքոս Դ Եպիփանն (Երեւեան) ըլլայ<sup>2</sup>:

Պլաու՝ Ստեփանոսի բիւզանդացւոյ հատուած մը մէջ կը բերէ<sup>3</sup>, յորմէ կ'ենթադրուի թէ Անտիոքոս Գ Մեծն՝ Անտիոքիդիս անունով քոյր մը ունեցած ըլլայ. բայց կը Վրիպինիթականաբար, ուր հին բնագիրք միայն մէկ Անտիոքիդիս մը կը յիշատակեն, որ Անտիոքոս Դ Եպիփանի թէ քոյրն էր և թէ հարճը. և այս վերջնոյս համար է Պողիրիոսի խօսքը: Այս կարծեաց հաստատութիւնը կը գտնենք Երկրորդ Մակարայեցւոց մէջ տեղ մը<sup>4</sup>, և որ անշուշտ վրիպած է յաչաց Պլաուի, թէ Քրիստոսէ 174 տարի յառաջ Տարսոնի և Մալովի բնակիչք ապստամբեցան, որովհետև Անտիոքոս Դ զիրենք տուեր էր իր Անտիոքիդիս հարճին. Սուրբ Գրոց գործածած հարձի բազարին (παλλακή τῶν βασιλέως) բացատրութիւնը՝ նշանակելով զԱնտիոքիդիս՝ մերձեցընելով անհարազատ որդի բառին, զոր կու տայ Պողիրիոս՝ թագաւորին քրոջը Անտիոքիդեայ որդւոյն Միհրդատայ, թոյլ տայ մեզ հետեցընել թէ երկու նշանակեալ հատուածք կը վերաբերին մի և նոյն Անտիոքիդեայ. որ ինչպէս ըսինք՝ Անտիոքոս Դ Եպիփանի թէ քոյրն էր և թէ հարճ: Թագաւորը, վրայ կը բերէ Մակարայեցւոց գիրքը, փութաց երթալ պատերազմաւ ընդդէմ կիլիկիացւոց ապստամբելոց, իր գործոց վերակացութիւնը յանձնելով Անդրոնիկոսի՝ միոյ ի սիրելեացն: Մեզի յայտնի կ'երենայ թէ Տարսոնացւոց և Մալովացւոց այս ապստամբութիւնը՝ ուղղակի առնչութիւն մը ունենայ կիլիկիոյ սահմանակից Փոքուն Հայոց մէջ ընդդէմ Քսերքսեայ տրուած պատերազմին: Եւ յիրաւի, թագաւորը կ'ուզէ տալ կառավարական տեսչութիւն ու եկամուտ մը իր Անտիոքիդէս քրոջը, և զոր վերջապէս Հայոց Քսերքսէս թագաւորին որդւոյն Միհրդատայ կնութեան տուաւ: Անտիոքոս Դ Եպիփանի արշաւանքն ի Հայաստան կը յիշատակուի նաև առ Դիոդորի, որ կ'աւանդէ թէ Ասորւոց թագաւորը հպատակեցոյց Հայաստանի ուրիշ թագաւոր մը՝ զԱրտաշիասն:

1. Numism. Zeitschrift Վեննայի. Հատ. 105 և ի Հայոց թագավորութիւն Անտիոքիդէս քրոջը, առ 1880 թ.

2. Վիսկոնտի, Պատկերագր. յունական Հատ. Բ. 249: - Վ. Լանկուա, Պրամագիստուրին հնոյն Հայաստանի, 15:

3. Եւստաթիոս. - Zeitschrift für Numismatik, Հատ. թ. 34:

4. Բ. Մակար. Դ. 50 և 31:

5. Դիոդոր Անկիլիացի, ի Հատքնատիրա յոյն պատմ. առ Միւլէրի, Հատ. թ.:

Դիպաց այս կապակցութիւն՝ այնչափ տրամաբան և խիստ է որ երկրայութեան տեղի պիտի չթողուր, եթէ կապագովկիոյ թագաւորաց պատմութեան մէջ ուրիշ պարագայ մը առջենիս չելեր նախընթաց ենթադրութեան զրեթէ հակառակամարտ։ Դիոդորոս կը պատմէ՝ թէ Արիարաթ Դ Եւսերիս, թագաւոր կապագովկիոյ (220 – 163), հարսնացոյց ի 192 զԱնտիռքիդիս, զգուստր մեծին Անտիռքոսի դ. այս ինքն զքոյր Անտիռքոսի դ. և կը յաւելու թէ Անտիռքիդիս երկար ատեն անդաւակ մնալով, թագաւորին որգեգրել տուաւ երկու ենթադրեալ որդիրը՝ զԱնտիռքիդիս և զԱնտիռքիդիս։ յետոյ Միհրդատ անունով զաւկի մը և երկու դատերաց մայր ըլլալով, իր ամէն ազգեցութիւնը բանեցուց՝ արքունի գահուն յաջորդութիւնը ապահովելով Միհրդատայ՝ ի վնաս կարծեցեալ երկու միւս որդւոց։ Անտիռքիդիս յաջողեցաւ ի հնարագիտութեանն, և Միհրդատ՝ արքունի գահն ելլելով Արիարաթ կոչուեցաւ և է Արիարաթ Ե Եւսերիս Փիլոպատովը որ թագաւորեց ի կապագովկիա յամն 163 – 130, բաց ի ենթադրելէն թէ Անտիռքոս Դ երկու քոյր ունեցած ըլլայ մի և նոյն Անտիռքիդիս անուամբ, և երկուքն ալ Միհրդատ անունով մէյսէկ որդիք, որ մեզի բոլորովին անհաւանական կ'երենայ, հարկաւորապէս պէտք է ուղղագրել և կարդաւորել մեր վերագոյն յառաջբերած երկու իրարու հակառակ վկայութիւնները։

Որ և իցէ կերպով, եթէ ընդունինք թէ Քսերքսէս իրեն հարսնացուցած ըլլայ Անտիռքոս Դիքոյրը, պիտի բռնադատուինք ըսել թէ Անտիռքիդիս անունով իրեք կանայք եղած ըլլան. առաջինն՝ Անտիռքոս Դիքոյր՝ և մայր Միհրդատայ. երկրորդը՝ Անտիռքոս Դիքոյր և մայր ուրիշ Միհրդատայ (Արիարաթայ Ե). և երրորդն Անտիռքիդիս՝ հարճ Անտիռքոսի Դ, զոր կը յիշեն Մակարայեցուց զիրք Այսպիսի ենթադրութիւն՝ ամեննեին հաւանականութիւն չունի. և լաւագոյն է մէկ Անտիռքիդիս մը միայն գնել՝ քոյր և միանգամայն հարճ Անտիռքոսի Դ. և այս իշխանուհւոյն և իր Միհրդատ որդւոյն խաղացած զերը ի Հայաստան և ի կապագովկիա՝ յայտնի է ի պատմութենէ Սելեւկեանց։ Մեր առաջ բերած գիպաց համաձայն՝ Քսերքսեսի թագաւորութիւնը կ'իյնայ յամի 170 նախ քան զհասարակաց թուականութիւն. իսկ Ստրաբոն բան տարի յառաջ կը գնէ (190). յետ պարտութեան Անտիռքոսի Դ ի Մագնիսիա և ապստամբութեան Զարիադրեայ նախարարի Ծոփաց։ Արդի քննաբանք՝ որ Քսերքսեսի թագաւորելը 200 թուականին կը գնեն, կը բռնադատին ընդունիլ թէ նոյն թուականէն քիշ ետքը՝ Զարիադրէս յաջորդած ըլլայ Քըսերքսեայ, ոչ թագաւորի այլ սոսկ նախարարի անուամբ։ Բայց եթէ մէկն համեմատէ Արդիսարիսի և Քսերքսեայ զրամները ընդ զրամոց

Զարիաղրեայ և Մորփիւլիկեայ, յայտնապէս առջի նայուածքովն ալ պիտի տեսնէ թէ իրարմէ բացարձակապէս տարբեր դրամը են, և չեն կրնար պատկանիլ ոչ մի և նոյն հարստութեան և ոչ մի և նոյն երկրի: Եւ հարկ չէ գեղեիլ ուր Քսերքսէս՝ կամ մանաւանդ իր հայրը Արշամուշատի թագաւոր է. և Զարիաղրէս թագաւոր կը հոչակուի Ծոփաց մնացած մասին և Փոքուն Հայոց. և իր դրամոց կապագովկեան գրոշմը հաւատարմութիւն է մեր խօսքին: Նկատել արժան է և զայն որ առ Պողիրիոսի՝ Քսերքսէս չի կոչուիր թագաւոր Ծոփաց, այլ լոկ Արշամուշատայ. կամ թէ ըսել Ծոփեան այն գաւառին որոյ մայրաքաղաք էր Արշամուշատ. որովհետի կրկին Ծոփը կային, Մեծն և Փոքր<sup>1</sup>. որով արգելք մը չիմնար զՔսերքսէս Արշամուշատայ թագաւոր համարելու, մինչ Զարիաղրէս թագաւոր է Մեծ Ծոփաց և միոյ մասին փոքուն Հայոց: Ուրիշ կողմանէ ալ, հաւանականաբար Աբդիսարիս և Քսերքսէս՝ վատահք ի կուսակցութիւն Զարիաղրեայ, մերժեր էին զհատուցումն հարկին առ թագաւորն Ասորւոց. և անոր հետիանք՝ Անտիոքոս Դի արշաւանք, որ զարկաւ միայն զՔսերքսէս և զԱրտաշիաս, առանց իշխելու անհանդիստ ընել զԶարիաղրէս՝ որոյ ապստամբութեանն թեակից և օգնական էին Հռովմայեցիք՝ ըստ Ստրաբոնի: Անտիոքոս Դի մեկնելէն ետքը, Զարիաղրէս կործանեց զլորեց զՔսերքսէս՝ որ Ասորւոց թագաւորին հարկատու եղեր էր և կին առած զքոյր նորա զԱնտիոքիդիս:

Քսերքսէսի անուամբ առ մեղ հասած գրոշմից վրայ նոր ըսելիք մը չունինք. Յաղթութիւն՝ պսակ գնելով թագաւորին անուանը, որ յաճախեալ երկրորդ երես մ'է (revers) սելեւկեան, արշակունի և Փոքուն Ասիոյ հարստութեանց դրամոց Բացի ԱԿ և ԱԴ տառիւք բաղկացած մենագրութեանց (monogrammes) որ այս դրամոց երկրորդ երեսին վրայ կը նկատուի, Վ. Լանկլուա ուրիշ օրինակաց վրայ կը գտնէ Հ և Ա տառերը<sup>2</sup>, և համակարծիք է ընդ վիսկոնտեայ<sup>3</sup> թէ իր թագաւորութեան վեցերորդ և ութերորդ տարիները կը ցուցընեն: Այս կարծիք հաւանականութիւն մը չունի. և այնչափ աւելի, որշափ ենթագրեալ Ա տառը՝ շատ հաւանականաբար մեր (Փարիզու) թագարանին մէջ գտնուածին ԱԴ մենագիրն է:

### ԶԱՐԻԱՂՐԷՍ

Ինչպէս տեսանք յառաջ, Ստրաբոն կ'աւանդէ թէ պարտութեամբ Անտիոքոսի Գ ի Մագնիսիա յամի 190 նախ քան զհասարակաց

1. Վ. Լանկլուա, ի Հատուածս յոյն պատմագրաց, տպ. Տիտոյի. Հատ. Ե. 50:

2. Վ. Լանկլուա, անդ:

3. Վիսկոնտի, Պատկերագր. յունական, Հատ. Բ. 232.

թուական, Հայաստանի նախարարաց մէջ երկու հզօրագոյնք՝ Զարիադրէս և Արտաշիաս ապստամբեցան, ու թագաւորի անունը սեպականնելով՝ իրենք զիրենք անկախ հռչակեցին Ասորւոց թագաւորաց իշխանութենէն։ Ասոնցմէ մին՝ Արտաշիաս, կազմեց Մեծ Հայոց թագաւորութիւնը, ու Արտաշատ քաղաքն հիմնելով՝ իշխանութեան ոստանն ըրաւ զայն։ և թէպէտ քսան տարի թագաւորեց, բայց իր անուամբը կոխուած դրամ չկայ։ Յաղթուելով՝ գերեցաւ յԱնտիոքոս Դեպիփանեայ։ իսկ Զարիադրէս՝ Ծոփաց թագաւոր հըռչակեցաւ։ և կը հաւատարմացընէ Ստրաբոն՝ թէ իր ապստամբութեան օգնեցին Հռովմայեցիք, և մի առ մի կը թուէ այն գաւառներն՝ որոնց միանալովը քիչ ատենուան մէջ ընդարձակութիւն առաւ նոր թագաւորութիւնը։ և էին՝ բաց ի Սոֆենայ կամ Ծոփաց՝ Ակիլիսենք, Ոդոմանդիտք և մասն մի փոքուն Հայոց և կատանիոյ։ Զարիադրեսի վրայ ուրիշ տեղեկութիւն մը չեն աւանդեր։ Ստրաբոն միայն կը յաւելու թէ շատ ժամանակ անցնելէն ետքը՝ իր յաջորդներէն մին, Ծոփացին Արդանէս՝ յաղթուելով նուաճեցաւ ի մեծէն Տիգրանայ։ որով կրնանք հետեւցնել թէ այն հարստութիւնը որոյ զլուխն եղաւ Զարիադրէս, Ծոփաց երկրին վրայ իշխեց 190 թուականէն մինչ ի 90, գրեթէ ամբողջ դար մը։

Զարիադրէս հայկական անունը Սարիաստր անուան կրնայ մօտենալ, որով կը կոչուէր մեծին Տիգրանայ որդւոց մէկը։ և Սարիգիսի՝ որ ըստ Հիւսիքոսի՝ կը տրուէր պարսկային Արտեմիսի։ Պերլինի թանգարանին մէջ գտնուած պղնձի դրամ մը՝ Զարիադրեսի կ'ընծայէ Պլաու<sup>1</sup>, զրո իրմէ քիչ յառաջ՝ ֆրիէտլանտէր Հայաստանի կամ Վրաց մէկ գաւառի մը վրայ իշխող անձանոթ նախարարի մը կ'ենթադրէ<sup>2</sup>։ Այս հետաքննական դրամին մէկ երեսը կը նկատենք անմորուս զլուխ մը՝ կապադովկեան թագով ծածկուած, իսկ ի միւս կողմն Անահիտ յոտին, աջ ձեռքովը ծաղիկ մը բարձրացընելով. ոտքին տակ երկու կծկեալ և կոնակնին իրարու տուած սփինգայք, և շուրջը այս վերտառութեամբ Ճռար, և Անտա Ճա։ — Պղնձի փոքրիկ դրամիս հակակողման այս դրոշմին հետ նմանութիւն կը գտնէ Պլաու՝ Միթրենես նախարարի ընծայուած արծաթի անվերնագիր գեղեցիկ դրամին, զրո յառաջ յիշատակեցինք։ Կարելի է որ Զարիադրեսի ընծայուած պղնձի դրամն ալ կոմանայի աստուածուհւոյն դրոշմն ըլլայ, և թերեւս նոյն քաղաքին մէջ ալ ձուլուած։ Այս ենթագրութեամբ միայն կրնայ մեկնուիլ թէ ինչու չունի ամեննեին հանգիտութիւն մը, ոչ ոճովը և ոչ դրոշմով հայկական ուրիշ դրամոց հետ որ ընծայուած են քսերքսեայ. Արդիսարիսի և Տիգրանեանց.

1. Numism. Zeitschrift Վեննայի, Հատ. Թ. 104.

2. Zeitschrift für Numismatik, Հատ. Դ. (1877) 206.

Նմանապէս կրնանք հասկընալ թէ ինչու զլուխը կրած թագը նմանէ կապագովկիոյ քանի մի թագաւորաց դրամներու վրայ տեսնուածին, որ կոմանալի սահմանաց մերձաւոր թագաւորութիւն մ'էր, երբ դեռ եւս իրենց իշխանութեան հետ միացուցած չէին զայդ քաղաք: — Պլառւ մեծ հանճարմտութեամբ Ճշշրջ, անունը ամբողջացընէ ի Ճարիածրից = Ստրաբոնի Զարիադրիս կամ Զարիադրէս անուամբ, հայկական զ տառը թէ ծՏ և թէ չ կրնար փոխադրուիլ: Երկրորդ անունը որ դրամին վրայ կը կարդացուի, Պլառւ կը համարի թէ «եռականն ըլլայ Զարիադրէս թագաւորին հօրը անուան, և կ'ընթեռնու: Այսածնէ, և ի հաւաստիս մէջ կը բերէ այլ և այլ թրակասկիւթական անուանք՝ սածնէ վերջաւորութեամբ, օրինակիմն Պարիսադէս Պարութիւն Թագաւորին:

Զարիադրեայ դրամին մերձաւոր նմանութիւն ունի ուրիշ մ'ալ, Արիասոս կոչումն ունեցող հարստութեան մը ընծայուած: և է զըլուխ մը՝ ծածկուած կապագովկեան թագիւ՝ յաջմէ. իսկ ի հակակողմն՝ ձիաւոր յաջմէ նիզակ արձակելով. դիմացը արմաւենի. վերտառութիւնն Արւած, իսկ ի ստորև Ճէ: Պղնձի դրամ ի թանգարանին Պերլինի:

Արիասոս անուն անծանօթ հարստութեան մը տեղ՝ մարթ է կարծել թէ Զարիադրեայ անունն ըլլայ՝ քիչ մը այլափոխուած այս բարբարիկ դրումին վրայ: Բայց նախամեծար կը թուի ուրիշ ենթադրութիւն մը: Արիամնէս կապագովկացւոց թագաւորին անուամբ՝ մեր հիմա ստորագրածին նման պղտի դրամներ կը գտնուին, բաց ի վերտառութենէն. նոյն կերպարանքն յաջակողմն, և նոյն ձիաւորը ի հակակողմն, վերտառութիւնն ալ նոյն ոճով ի վերին կողմն և ի ստորև. որով եթէ իրարու հետ համեմատենք, երկուքին վրայ ալ նման տարերաց պիտի հանդիպինք: Այս նմանութիւնքը նկատելով, կը ռնանք հաւանականաբար այն եզրակացութեան դալ, որ ենթադրեալ արիարոսեան դրամը՝ կապագովկիոյ արիարամեան հարստութեան պըզնձի դրամն ըլլայ: Այս ենթադրութիւնը հաւասարմացընել կը թուի Ռէյնախի յիշատակած Ամուրէլի հաւաքման մէջ գտնուած դրամ մը, որ բոլորովին նման Արիարոսի լնծայուածին: Տիանա անունն ալ կը կը, որ կապագովկիոյ քաղաք մ'է, և որոյ թագաւորն էր Արիարանոս:

4. Անդ. Հատ. ի. 8:- Արևախ, Երեք բազաւրուրինք ի Փոքրն Ասիա, 32:

Շարունակելի